

Ltn  
1591



1199


# ԱՐՏԻ ԹԱՐԳՄԱՆ

Կ Ա. Ա.

## ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԵՈՐԳ Գ. ՇԵՐԵՆՑԻ

Մ Ա. Ա Ն Ա.



Զար մարզիկ միայն երգեր չունին  
Շ Վ Լ Լ Յ Բ



Տպարան Մովսիսի Վարդանեան

1884

# ԱՐՏԻ ԹԱՐԳՄԱՆ

Կ Ա Մ

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՈՒՐԴԻ Գ. ՇԵՐԵՆՑԻ

ՄԱՍՆԱ.




Շ Ե Լ Լ Ե Ր

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսիսի Վարդանեան

1884



1894

ՅԱՐԻՍՅ ՊՑՈ

Ա Ա Բ

Դօվոլեն Շենզորու Տիֆլիս 30 Օկտյաբր 1884

ԳՅԵՐ ԳՅԵՐ ԳՅԵՐ

Ա Հ Յ Յ Ա

Յանուար պահ կ ըստ պահ  
1884 թ

Տիպ. Մ. Վարդանյան Տրոյց. թեր. ձ. № 11

Խաչարքան մատուցութեան մատուցութեան

1-3-1

41591-60

25 1597

ՊԵՏՈՒ Ա ԾԱՌԱՅԻ

## Ն Ա Կ Ե Ր

Պատրի մայութեան նաև զի պայման  
առանձնական գործութեան մատուցութեան  
ԽԱՌԱՅՈՒ ՃԱՅԱՐԱՐ ԹԱՅԱՐ ՅԱՅԱՐ  
շու ծաղկա գումա արդիքի անուննեաց  
առա բնակաւթիւն բնակեալով առանձնական  
պատրի մայութեան գումա զայլ  
**ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ ՄԵՐԱՋՈՒԹԵԱՆ**

Խաչարքան խորակութեան մատուցութեան  
առանձնական առանձնական պատրի մատուցութեան  
**Ա.ՄԵՆԱՊԱՏԻԿ ԽՐԻՄԵԱՆ** զայլակ

ՅԱՐԻՍՅ ՊԵՏՈՒ Ա ԾԱՌԱՅԻ

# ԱՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԻԿ

Յանկալի էր ինձ Զերային Բարձր—  
Սրբազնութեան քաղցր հովանաւորու-  
թեան ներքոյ, ունեցած պաշտօնավա-  
րութեանս միջոցաւ, ձեռք բերած աշ-  
խատասիրութեանց արդիւնքից առա-  
ջինը Զեր պատուական անուան նուի-  
րել:

Որոյ բաղդն ունենալով հանդերձ,  
Խոնարհաբար խնդրեմ ընդունել բարե-  
հածիք:

Դեմք Գ. Շերենց

## Ա Զ Դ

Իմ առաջին աշխատասիրութիւնը  
«Անցք և վիշտք Հին—Բայազոյ և  
թշուառների» վերնագրով գրուածքը  
առ այժմ ինչ ինչ պատճառներից չը-  
տպագրուելուն համար, ի միամտութիւն  
նորան բաժանորդ գրուօղներին, ուղար-  
կումեմ այս բանաստեղծութիւններ.  
Կանխապէս նոցա ներողամտութիւն  
ինդրելով:

Գեղրդ Գ. Շերենց

¶ 2. II

զի՞ս ել առյօնականքու միջաւու Եվ  
և բարակու—մին զուցի և զատի  
զանուար խղրանիմի «Ժղմանու Ա»  
ու ընդհանուանու չի չի Ներս առ  
մին Ելուանի և պահու մայդաշաբար  
զուրու և մշյամի ուր բյունեայ մազու  
ովանաժնի ուր ծրասուանու ուր Ներս առ  
մին Ելուանրացիւ ուրու սիստիմայ  
: Խղմանու

## ԵՐԿՈՒ ԽՍԱԳ

### ԻՄ ԵՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ

Երգեր կամ տաղերը մարդկալին ազգի հոգուոյ սըրտի եւ մտաց, տիսրութիւնների, ուրախութիւնների — բուռն գրացմանց արտայայտութիւններ են. որոց միջոցաւ զգալի վշտակիր եւ ուրախալինը բառերի հիմսուած շարակարգութեամբ, կարտադրէ իւր ներքին հոգեկան եւ միանգամայն արտաքին զգացմունքներ եւ ցանկութիւններ:

Պատմաբան, ատենաբան եւ ձարտասանը իրաւունին իւրեանց օգտակար առաելութիւնները մարդիկ համոզելոյ եւ տար համոզելոլ, ժողովրդեան օրինակելի դասեր, բարոյականներ ուսուցանելոյ. սակայն երգիչն էլ տաղաջափն էյ իւրեանց չերմ գրացմանց վեճ տպաւորութեանց տակ, ոչ սակա, օգտակար համարուած են հետաքրքիր ցանկացոյինը իւրեան պատկանեալ ազգի, հայրենիքի կրօնի անցեալ պապէրի, սիրողի եւ սիրուողի, բարոյական եւ թէ պատմաբանական ձաշտկին յարմար տիսերը ընծայելով:

Երգերը հին եւ նոր ազգաց մէջ մի առաջնորդող միջոցներ եղի են ամբոխին. լինին դոքա եկեղեցական եւ աշխարհական, սիրոյ եւ ատելութեան. բարեկամական եւ շարկամական ոգով շարայարուած. վերջապէս ունեցել են արդիւնք քարացած սրտերն անգամ մեղմացնելու:

Միջոց եւ տեղը խաղաղ եւ անվրդով կեանքը — օգնում են մարդոց իւրեանց զգացմունքը արտայայտելու համար շատ անգամ երգերի միջոցաւ. այսպէս 1883—84 քուականներում, երբ ամենապատիւ Սր. Հայրիկի հրա-

Նիրանօք պատիւ ունեցայ Վարագայ ժառանգաւորաց դպրոցում ուսուցիչ լինելը այդուեղ ի քիս մի քանի աշ- խատասիրութիւնների, պատեհութիւն ունեցալ ի մի հա- ւաքել իմ հին եւ նոր մի քանի տաղաջափական գը- րուածք, որոց մէջն է նա եւս նոյն դպրոցի աշակեր- տաց երկու գրուածքներ. որոց խնդրանօք ընդունեցի իմ երգերի շարքին:

Թող ներուի ինձ որ այլպէս համբայական մտքե- րի ընթերցողի ուշադրութիւն եմ խնդրում իմ սրտի, պի այլպէս սասած հին եւ նոր կարկտանները շօղափելու համար:

Որոց բարի ակնարկութիւններ ինձ քաջակերութիւն համարելով մեռումեմ . . .

Գ. Շ.

## ԻՄ ԱՆՑՔ

Ե ՀԻՆ—ԲՈՅԱԶԻՑ 1877 ԱՄԻ

Ի՞նչ էր այն ամենասոսկալի պա-  
տահար, որոնք զրկեցին ինձ իմ անդ-  
րանիկ վաստակներից . — Հարաւային  
ազգաց քուրդ ջէլօնների անողորմաբար  
ասպատակութիւնք:

1877ին, երբ որոտացին Հրացայտ թշն-  
դանօթները, այդ թշուառ երկիր Հին—  
Բայազիտ իւր շրջակայ գիւղերով գա-  
ւառներով Հրոսակ քուրտերի անողորմ  
բարբարոսութեանց և յափշտակու-  
թեանց զոհ զնաց, այդ թշուառ դէպ-  
քում վշտակրեցանք և մենք, նիւթա-  
պէս և բարոյագէս վնասուելով հազիւ  
հազ մազապուրձ եղայ մահերից:

Գրքերս, գոյքերս և գրութիւններս  
իմ երկանցու արդիւնք, բաղաքի առուակ-

Ների ջրերի և փողոցների փոշիների երեսով ծըմիկ ծըմիկ պատառոտուած և տարածուած միայն տեսնուեցաւ, հակառակ իմ ցանկութիւններին:

Եւ մի՞թէ կարելի մոռանալ նոցա, մոռանալ շուտ ինչ որ միտք, հոգին ու մարմին մի զգացմունքով արտայայտել են. ոչ ոչ, երբէք ոչ. դա խթան է ինձ համար մի անմոռանալի և անփոխարինելի կորուստ:


Ահա դարձեալ զրիչ ձեռք առած շարունակեցի իմ սիրելի պարապմունք. զրել և երգել տաղաչափել, որոցմով թեթև ինչ սփոփուած կը լինեմ իմ տարագրութեանս մէջ զգացած և կրած վշտերից:

Մանկութեանս օրեր ինձ համար քաղցր ժպիտներ ակնարկեցին. օրից օր դէպի լան յառաջադիմելոյ ձկտումէի: Ո՞վ կը հեռատեսէր թէ՛ ժամանակ պիտի ընտրէ, որ մի փոքրիկ աշակերտը ուսուցիչ դառնայ, գիրք սիրէ. զրիչ և

զրելը յարգէ. նուիրուել այդ սրբազան պաշտօնմին ուսանիլ և ուսուցանել:

Ուրեմն թողնենք հինը, մեր հին աշխատութիւններն, սրտիս այն բազմատեսակ արտայայտութիւններ. դառնամք զէպի նորն, նորն զրելու և նորովն զբաղելու, որով իցիւ թէ սփոփիլ, միսիթարիլ, ապրիլ և կեալ պիտանի անդամ սիրելի ազգիս:

Գ. Ը.



ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՈՐ ՀԱՆԳԵՍԻ 18<sup>2</sup><sub>26</sub> 79

ՄՈՍԿՈՒԱՅ

Որ ի մահուն ննջես այժմ ի քուն հանգիստ,  
Հանգիստ ի բազմավաստակ աշխատութեանցդ.  
Այլ չես մեռեալ կենդանիդ անմահ գործքով  
Հայազն ապագայնոցս հայելի գպրութեանց:

Ի քնարս մանկուոց Հայկազարմից  
Որ ընդ միշտ գովաբանի անունը ձեր վեհ.  
Անմոռացօն զքոյդ արարք քրտնաջան.  
Յօրհներգուս հայորէիցս կրկնի յարատեւ:

Թէ ցուրտ շերմին մտեր ի կիրճ,  
Թէ կեանքիդ ետուր վիրջ  
Բայց քո անունը պայծառ. մնաց.  
Ի ժողովուրդս, ով նաղարեանց:  
Ապա ընկալ հագներգո այս երկոսող  
Ընկալ գու մեկենաս ուսմանց  
Քո բարերար յիշատակին  
Նուէր ինչ ի քէն յարգողաց:

1879 Նոր Բայազիտ:

ԱՆՄԵԴ ԳԱՐԵՆՈՒԿՆԵՐ

Լեռնափեշերի տակով  
Որտեղ առատ էր արօտ,  
Առտուանց կանուխ շատ շուտով  
Կարածէր գառնու կների հօտը:  
  
 Մեր հեղ գառնարածը  
Փոքրիկ մանկիկ էր ոիրուն.  
Դաշտ, ձոր, լեռ վազ կուտար.  
Որին եռ կուտար արիւնը:  
  
 Մինչ նա մի բրի վերեւ  
Ապահով էր նոտեր,  
Սրինդ իւր ձեռին,  
Կերգէր քաղցր երգեր:  
  
 Գառները սրնգի ձայնից  
Հեղիկ հանգարտ կարածին  
Առատ ճարտկ կար այդ տեղ,  
Ճաշակ կուտար նրանց բերնին:  
  
 Յանկարծ թփերի տակից  
Դարանակալ մի գաղան.  
Գրոհ տուած անդ վաղեց  
Նոցա խաղանք շփոթեց:  
  
 Գառները ապուշ մնացած  
Ոչինչ ընդգէմ չկացին,  
Դաղանը սրտի ուղածով  
Պասը եփեց ամենքին:  
  
 Մինչ փոքրիկ գառնարածը  
Սրինդ թողած վաղեց անդ,

Եւ մինչ շները զարթեցան  
Գաղանը տեսաւ ամեն բան:

Մէկին տեղ ասեմ հարիւր  
Պատառոտեց լավիթզողն  
Ոչ մի գառնուկ չթողեց  
Առանց վէրքի գիշատօղն:

1875 Վան

ՆՈՐ ԲՈՅԱՇՈՑ «ԽԱԶՈՅ» ԽԱԶ

Դուք սիրումէք «Խազա» Խաչի  
Սյն սիզաւէտ ճախճախուտ.  
Բոյսը կանաչ, ջուրը սառնորակ  
Իւր կաթիւներ պադ եւ զուտ:  
Ես սիրումեմ մեր Վարագայ  
Գալիլէի տեսարան.  
Ուր շրջապատ ծըծին ծաղկունք  
Որոյ մի տեղ չիք նման:  
Դուք սիրումէք Գեօկչի գետակ  
Որը կուտայ ձեղ Խշան ձկներ.  
Ես սիրումեմ մեր Վանայ լիճ  
Որը կուտայ մեղ լաւ տառեխներ:  
Թէ ձեղանում վարդ կը բացուի  
Օգոստոսի վերջերում,  
Մեղ մօտ քեափուր, քիշմիշ վարդեր  
Մայիսուայ հետն են քաղվում:  
Ինչքան էլի վարդ սոխակին  
Սոխակ վարդին սիրահարէ

Իմ սիրած վարդը իմ հայրենիք  
Նամիրամակերտ մեծ Վանն է:  
Դուք կարօտ էք մի անհիւթ  
Կանաչ գեղին ծիրանի.  
Բայց մեր աշխարհ առատութեամբ  
Ամբարէ կարմիր խնձորի.  
Առատ է մեր տանձն ու գեղձ,  
Սալոր կեռաս ու ծիրան.  
Բայց դուք չունէք առատ պտսւղք  
Որ ձեր բերնին ճաշակ աան:  
Ձեր աշունը մեր ձմեռն է  
Եւ ամառը մեր գարուն.  
Եղանակներ մէկը մէկի  
Միշտ կը լինին անյարմար:

ՎԱՆԱՅ ՄԵՇ ՀՐԴԵՀԻՆ ԱՌԹԻԻ 1)

Ի 1 Դեկտ. 1876 ամի.

Ա՛խ հայրենիք թշուառ անտէր,  
Ո՞ր ցաւերով արդեօք մաշիս.  
Եւ ո՞ր վշտերն քեզ բաժին է  
Տարապարտուց որ կը զոհուիս:

Ծանոթ: 1876 դեկտ. 1 Գիշերուայ ժամի 8 ին Վան  
քաղաքի շուկասերը մօտ հազար երկու հարիւր  
կրպակների տեղական քուրդ և թուրք սրիկանե-  
րից նախ այրուեցան և ապա կողոպտուեցան:

Ա՛խ հայրենիք քո սուրբ կեանքը  
Եւ քո քոյքերն քեզ ակներեւ  
Քո բովանի հարստութիւնդ  
Որ թշնամոյդը կուր եղեւ  
Փանի՞ քանի անմեղների,  
Որ թափեցին սուրբ արիւնը  
Ծըծեց երկիր եւ երկինքը.  
Մի՞թէ աեսաւ այն ոճիրք:  
Իմ հայրենիք ոզբումեմ ես,  
Աղբումեմ քո թշուառութիւնդ  
Մի՞թէ այդ է ճակատագիրգ  
Զրկողներաց մնաս նկուն:  
Անտէր ազգ ո՞ կարեկից  
Լիցի վշտացդ մխիթար  
Քո ողբերի տխուր ձայն  
Միշտ տի մնայ ընդունայն:  
Սփոփիր դու որչափ պէտքէ,  
Քեզ պաշտպանէ Եէհովայն.  
Կը վշանան քո ոխերիմք  
Նուտ մոռանաս վշտերն այն:  
Յանկանումեմ եւ ես յայնժամ  
Դառնալ սիրով քո ծոցում.  
Երգել ազատ ընդ համատիս.  
Ոյց կարօտիւն եմ մաշփում:  
Ա՛խ հայենիք իմ Վան—աշխարհ  
Իցիւ արդեօք որ սփոփիս.  
Եւ քո ողբոցդ լիցի գաղար,  
Բարօրութեամբ փառաւորիս:  
1876 Նոր—Բայազիտ

ԼՈՒՍԻՆ ԵՒ ԻՄ ԿԱՅԱՐԱՆ

Որչափ սիրուն է քո հայացքդ.  
Որչափ փայլուն քո տեսարան.  
Որ պանդխտիս իմ կացարան,  
Այսպէս պայծառ առնես լուսին:  
Ի նինջ անուրջս թէ շփոթիմ  
Զարթնում աղդմամբ քո շողերիդ  
Ինձ միսիթար եւ սփոփիչ  
Դու ես յայնժամ ազնիւ լուսին:  
Ճառագայթէ պայծառ լուսին.  
Միակ միսիթար հէգ պանդխտին.  
Բաց թօթափել սրտիս ցաւեր  
Որ չմնամ միշտ իյերեր:  
Աչքունքս ի դէմդ պշացրած,  
Մեղմիկ հանդարս քո ընթացիդ.  
Անշամանթաղ լուսովդ փայլուն.  
Կը փտրատես սուգն իմ սրտից:  
Ոչ քանի հեշտ եւ սփոփանք  
Սիրտ իմ միտք իմ հրճուի իքեւ,  
Պանդուխտ տխուր իւր սենեկում  
Քեւ իւր ցաւերն է փարատվում:  
Դէհ սպասիր պայծառ լուսին.  
Մինչ իմ աչերս առնի մրափ.  
Ցոլէ ցայտէ դէպ յիմ երես  
Մինչ ես մտնեմ քնոյն վիրապ:  
Թէ կը գնաս կանցնիս յինէն,  
Ժտել ժտեմ կրկին քո դարձ.

Թէ կը գնաս դէպ հայրենիք  
Առ իմ բարեւս տար սիրելեացս:  
Բարեւ յիշէ Գալիլէին <sup>1)</sup>  
Բարեւս եւ սէրս տար Աստղկան.  
Արդեօք զուարթ եւ անթարշամեն  
Իմ հայրենի ձոխ բուրաստանք:

1880 Կոր—Բայազիտ

ՔՐՏԱՀԱՅԵՐԻ ՊԱՂԱՏԱՆՔ ԱՌ ՏԵՐ

Մինչեւ ե՞րբ ո՛ Տէր  
Մենք մնամք անտէր.  
Զրկանք թշնամուն  
Առցէ մեզ նկուն:  
Մինչեւ ե՞րբ Աստուած,  
Սիրտք մեր տրտմազդած  
Մնան անսփոփ  
Վշտօք վարակած:  
Մինչ ե՞րբ Փրկիչ,  
Ազգ ապականիչ  
Հեղցէ մեր արիւն,  
Մահուամք դառնագոյն:  
Մինչեւ ե՞րբ գթած  
Աստուած ողորմած

Ծառաբ: Գալիլէա և Աստղիկ լեռներին Վանայ և Վարագայ մենաստանի արևելեան կողմից զուարձալի սպօսավայրերով:

Այցելու լիցիս,  
 Հէգ քրտահայերիս:  
 Դատեա զայնոսիկ  
 Լեր մեզ զօրավիդ.  
 Մարտիր ընդ ոսոխս.  
 Մեղ պահողաց ոխս:  
     Զմէ զի՞ դարձուցանես.  
     Գթառատ երեսդ,  
     Ի քեզ եմք անկեալ  
     Քեզ ապաստանեալ:  
 Նենգաւորք եւ հէգք  
 Ազգն արիւնահեղ  
 Մինչեւ ե՞րբ կացցէ  
 Զայրին կեզեքէ:  
     Առ սուր եւ զասպարդ  
     Անյաղթ փրկութեանդ.  
     Սրի՞ մեզ օգնել.  
     Բաւ է, Տէր, յամել:  
 Ծագէ քոյդ արեւն  
 Փարատին ամպերն.  
 Պարզէ յաղթական  
 Ազեղն հաշտութեան:  
     Բաւ այս գառագիդ.  
     Դադ արա ուղիդ.  
     Զերձ անտերունջ քո հօդ.  
 Մեղ ծագէ աւօտ (առաւօտ)  
     Այց արա'  
     Ոռւ Տէր Ստբավովդ:

1876- Շատախ

ԱՆՏԵՐ ՈՐԲԻԿՆԵՐ.

Աշունքուայ էն վերջերում  
 Ժամի դռնումն էր կանգնած.  
 Մի մանկամարդ կին արմատ  
 Ծնօղը չորս հինգ որդկերանց:  
     Հագին ուէր մի զպուն (վերարկու)  
     Հարիւր տեղից գըզգըզուած  
     Եւ ուս ոսկը իւր մարմնոյն  
     Ծակոտինքից գուրս թռած:  
     Իսկ նորա որբ զաւակունք  
     Պլըլուած հին շապիկում.  
     Ոտերնից մինչ սրունդ  
     Լերկ մարմնով գողզողում:  
     Սրբալյարի մեծ գռնից  
     Ներո գուրս արօղաց.  
     Զեռք էր մեկնում ամօթով  
     Կարեկցութիւն իւր վշտաց:  
     Հարիւրից տասը միայն  
     Խղճահարուած նայումէր.  
     Եւ նորա գանձանակին  
 Մի սեւ փող ձգումէր:  
     «Ո՞վ պարոններ, աղաներ»  
     «Գթայէ՞ք մեզ վրայ».  
     «Զաւկըներինս ո՞րն ուզէք»  
     «Զեզ կ'տամ, անխնայ»:  
     «Ոչ տէր ունեմ տիրական»  
     «Ոչ ապրուստ օրական»

« Դոցա հայրը շատ վազուց »  
 « Մտեր է խոր գերեզման »:  
 « Մեր գեղի քուրտ Թամօն »  
 « Խլեց մեզնից խոփ արօր ».  
 « Նոցա հետ գօմշուկներ »  
 « Տարաւ, պարպեց ցործի հոր »  
 « Իմ մարդ՝ դոցա հայր ».  
 « Են սաստիկ կոկիծէն »  
 « Զկարաց համբերել ».  
 « Անիրաւի զրկանքէն »: . . .

Ոչ ով ուշք տուեց  
 Թշուառ արարածին  
 Հարիւրէն տասը միայն  
 Գթացին այս խղճին  
 Ամբողջ գումարածը  
 Եղաւ հինգ զուրուշ.  
 Այդ ոչինչ էր, որբերաց  
 Մատաղ կեանքին բերել ուշք:  
 Մայրը բռնեց ձեռքերից  
 Ընկաւ փողոցներում  
 Մէկի գռնից չոր սեւ հաց  
 Միւսից հինը էր ստանում:  
 Գիշերուաց տեղն էր խոնաւ  
 Զունէին վերմակ ինչ  
 Որ նոցա լերկ մարմնոյն  
 Լինէր ծածկիչ:  
 Զտեւեց մի ամիս,  
 Հիւանդացան ամէնքը.

Անմաս անբաժին  
 Մեռան այս հէգը:  
 Այսպէս՝ ահա աշխարհի  
 Տիուր, ուրախ շրջանում  
 Շատ անտէր որբեկներ  
 Ի զուր փճանում:  
 Թէ մեզ լինի որբանոց  
 Պատսպարան թշրւառից  
 Նոքա կազատուին  
 Ամէն զրկանքից:  
 1883 / Վան

ԾՆՆԴԱՎԱՅՐ ԵՐԿԻՐ

Հայ պատանի գանգրահեր,  
 Սիրուն աչերդ ինձ դարձուր  
 Քոյդ անձկարեօք սիրատոչոր.  
 Հալվիմ մաշվիմ օրէց օր:  
 Ես քեզ ծնօղ հայրենիքն եմ,  
 Քաջ պապերիդ օրօրօն.  
 Իմ ծոցումս առին հանգիստ  
 Տրդատ, Վարդան եւ Վահան:  
 Մի վարանիր ասուանդական  
 Թափառական ՚ի սար ձոր.  
 Կաց հաստառուն ՚ի հայրենիք  
 Ուր կան նախնիքն բիւրաւոր:  
 1879 Նոր Բայազիտ.

ԳՐԱԿԱՆՈՒՄՆ ՀԻՆ—ԲԱՑԱԶՏՈՅԵ

Ի 18 ԱԿՐԻԼ 1877

Զարթիք գոգովիդ ի քնոյդ նիրհմանէն  
Քեզ կեանս պարդեւեց երկնից Տէր Որէնն  
Պատռէ քօղդ սգոյ մասամբն համօրէն  
Ընդ առաջ փութայ տենչենք փափագմամբ  
Օրհնել զնզատիչդ երգօք քաղցրութեամբ:  
Կեցցէ լիազօր Կայսրն Աղէքսանդր.  
Փառքն յաւերժասցի փառօք մշտափառւ  
Զերթ արեգական կապուտակ երկնի,  
Փարատեաց զմէնթ զմութ գիշերի.  
Պարզեաց հովանին թորգոմեան ազգի:  
Բարձրասցի փառօքն արդարութեան,  
Անուն Կայսերին միշտ եւ յաւիտեան:  
Կեցցէ լիազօր Կայսրն Աղէքսանդր,  
Փառքն յաւերժասցի փառօք մշտափառւ  
Կարգադիր զօրաց քաջայալթ բանակ,  
Ախոյեան զինուորք եւ քաջ զօրականք.  
Ահարիու արար թշնամոյն մարտակ:  
Շառաշիւն զինուց քաջ հետեւտկաց.  
Հեղծան ի փոշի զօրքն թշնամեաց:  
Կեցցէ գեներալ Տէր Ղուկասով  
Կեցցէ անվտանգ մեծի բանտկովնւ  
Եւ զաւագանիոն լոեծի բանակին  
Յաւ ելցին ի շուք ի համբաւ բարին.  
Փայլեսցի պատիւն եւ գեր քան զարփին:  
Կեցցեն եւ կեցցեն բանակը ոռուսական  
Կեցցեն ախոյեանք քաջ եւ յաղթական:

Փայլեսցի նշան խաչին զօրութեան,  
Փայլեսցի դրօշն միշտ եւ յաւիտեան:  
Կեցցէ Վեհափառ Կայսրն Աղէքսանդր  
Փառքն յաւերժասցի փառօք մշտափառ:

Ծառը. Այս երգը երգեցին տեղոյն Արամեան ուսումնարանի աշակերտք ոռուսաց զօրաց Հին Բայազիտ զբանան օք.

ՊԱՆԴՈՒԽԾԻ ՍԵՒ ՎԻՃԱԿ:

Ինչո՞ւ այսպէս տարագիր  
Իմ հայրենի աշխարհից.  
Ինչո՞ւ այսպէս տարաբնակ,  
Տի վշտանայ իմ վիճակ:  
Ինչո՞ւ, ինչո՞ւ ասա՞ ինձ  
Ով իմ բախտ եւ Աստղիկ.  
Թողեալ զտուն հայրենիք,  
Աստ անդական երերիմ.  
Ո՞վ են այն հրէշք չար գագանք,  
Զեռք աւերիչք եւ դաժանք.  
Մերթ սպառնան հուր եւ սուր,  
Մերթ աւար առումն մեր կենաց:  
Ինչ զգացում որ կրես  
Պիտի խեղդես սրտիդ մէջ,  
Մեր տեւական զրկանքին,  
Չ'կայ երբէք դադար վերջ  
Քրդերի ահ ու դողն  
Ամէնին սարսափ ձգեց

Խանձարուրիս մէջէն

Ինձ էլ տարագրեց:

1878 Նոր Բայազիտ

Առաջին համար առաջ պատճեն

## ԵՍՈՐՀԱՔԻՈՐՈՒԹԻՒՆ

Նոր տարոյ «Մարդասիրական» Անկ.  
Նոր — Բայազտոյ Հոգևոր Երկսեռ  
դպրոցի.

Պայծառ տյսօր մեզ կերեւի  
Երկնից կամար կապուտակ.

Պայծառ բնութիւն համատարած,  
Ցերկնից ժապտէ եւ լուսնեակւ

Եհաս ժամ բարի  
Չեր շնորհաւորել

Նոր օր նոր տարի:  
Կեցցէ միութիւն

«Մարդասիրական»  
Նոր ընկերութեան:

Տարուց ի տարս ներբողեսցի  
Չեր սուրբ արարք պատուարժանիք

Որ մանկուոյն հայրենետց  
Եղէք պաշտպան զօրավիգ:

Կեցցէ միութիւն  
«Մարդասիրական»

Նոր ընկերութեան:

Ի սուրբ քնար հայոց մանկանց

Գովաբանի անուն ձեր վեհ:

Եւ սիրտք նոցա որ բարախին,

Ուրախ ժամոյս այս պատեհ:

Օն դուք մանկունք որ Դեղամեան

Ի ձեր հնչիւն քաղցրաբարբառ.

Օն փութացէք ան երգեցէք

Բարերարաց ամ երկար:

Կեցցէ միութիւն

«Մարդասիրական»

Նոր ընկերութեան:

Ի 1 Յունուարի 1880 թ. Խոհե գոյց

Խոյցուանդրուն Նոր

Խոյցուանդրուն Նոր

Խոյցուանդրուն Նոր

Խոյցուանդրուն Նոր

Թուար, հանգեար իմ սիրոյս հատոր,

Թուար գնացիր իմ սրտիս կտոր.

Դէսի ո՞ւր դու այդպէս արագ:

Արացար գէպ յեթեր ի կետնս երկնաւոր:

Մի ծաղկով բացուած

Թառամեցար խոկոյն

Տչաս բախտիգ

Խիթան իմ հոգոյն:

Երկնից մետուխփեան սիրեցեր կայան,

Սիրեցեր կայան, սրբոց իջեւան,

Անգ հրճուել, պարիւ ցնծալ

Լնդ դասս քրիստոսաղնեան:

Ապա աչկունքս հարեր արտօսը,

Զքոյդ յիշատակս մոռաբերել.  
Գալ եւ շուրջ գերեզմանաւդ  
Ողբալ, սգալ եղերգել:  
Անմոռացօն մնաց ինձ մօտ  
Քաղցրաբարբառ քո լեզու  
Մերթ միայնակ վիճակիս-  
Լիցի միմիթար այցելու:  
Ի յուշ կան եւ քո արարքդ  
Բարոյականի մշակ սիրահար.  
Ինձ ոչ երբէք անմոռացօն  
Որ թողեր յիշել անդադար:  
Ապա ես քոյդ կարօտով  
Պիտի մնամ պիտի երգեմ  
Իմ մնացեալ օրերով  
Իմ երգասու քնարով:

26 օգոստ 1879 Հին Բայազիտ

~~~~~

ԱԲԻՍՈՂՈՄԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

Որդի որ ընդվեալ ժպրհիցէ հակառակ ծնօղին,  
Հալածական 'ի սար 'ի ձոր իւր ապաստան գտանի.  
Ապստամբեալն Արփսողոմ մտարերէ ապերախտն  
Տագալել հայրն ի գահից կենդանոյն գահավեժել.  
Դմանայիմ յանապատի դան Լէքէօնքն Աստուածեան  
Ճակատ կանգնին ախոյեան զըրքն Աստուածահօրն.  
Ուր Դաւիթ բաժանէ զզօրս յերիս գունդս,  
Եւր զօրավարքն կանգնին Յովաբ: Արփս և Եթթիս:  
Խաղան գնան, շարժին զօրքն և զօրավարք:  
Աչեղ Ճակատամարդ տալ ընդ որդշն ստահակ.

Հայրն գթառատ ճիշ արձակէր ի հետուստ.  
Ժամել ժամէր խնայել կենաց Արփսողոմայ:  
Գան հասանին և գունդք ապստամբին,  
Հանդիպին միմեանց մերձ Եփրեմեան անտառի,  
Եղբայրը սպառնայ զրաւել կեանք եղբօր:  
Սուր հարազատին զհարազատն առնէ տապաստ:  
Ճայթիւքն աղեղանց յօրս տան ճոնչիւն.  
Երկու ազգի երկու եղբարք մարտնչին աչեղապէս,  
Բանակ ատպստամբին յետս ընդկրունկս տայ փա-  
խուստ.  
Ամօթապարտ զէնքն ու զրահ թողուն ի դաշտի:  
Մինչ մարակէր Արփսողոմ զեւր ջորին  
Շտապէր տալ փախուստ յանտառի.  
Գանգուրք հայրադաւին խճճին զփայտէն.  
Զերթ կախաղանէ երկարանայր պատանին ժպիրհ:  
Եւ Յովաբ ընդ այս տեսիլ յօրմ ցնծացեալ.  
Հրամայէր զինաւորին նետահարել զթշուառն.  
Վերջանայր պատերազմ, փողք հանգստեան զո-  
ղանջէին:

Բանակն Խսրայէլի հրճուէր ընդ այս յաղթութիւն:  
Դի պատանցն անդ յանտառի պարարեին  
Ծածկէին կյտ քարամբ անտառային,  
Արքայ Դաւիթ մինչ մնայր Ելիցն պատերազմի,  
Գուժ մահուն իւրց որդոյն առնէր յանկարծ.  
Համակեալ ի սուգ անկանէր ի մենարան.  
Չեռն ի ծնօդ տչք արտասուօք հարեալ սգով:  
Ողբայր կականալի և սրտին թառաջն էր,  
«Արփսողոմ Արփսողոմ», որդեակ իմ Արփսողոմ»:  
«Ես փոխան քո, մահ ինձ փոխան քեզ».  
«Արփսողոմ, որդեակ իմ Արփսողոմ»:

Ի 28 Ապրիլ 1881 Նոր Բայազիտ.

~~~~~

Գիշեր Սեհ Գիշեր

Կոտորած Հին Բայազոյ

Ի 12 Յունիսի 1877

Ով գիշեր գիշեր տխուր  
Ողբ աղաղակ է քո մէջ.  
Զրկանք լլկանք մի վայնասուն  
Աչա պատեց ամենուն:  
Ինչո՞ւ լուսին ոչ քո գէմքդ  
Տխուր գիմօք սգօղես.  
Ինչո՞ւ այդպէս դառնագին  
Քո պտոյտներդ ոլորես:  
Կաց դու վայրիկ մ ի համբեր  
Վշտագնելոյս լեր ընկեր.  
Յաւած սրտիս սգակիր  
Զքեղ ընկեր գտի ժիր:  
Յայտէ լուսին քոյդ լուսին  
Զի լոյս լիցի թշուառին  
Յանիրաւաց երկիւղէն  
Գոցէ իւր տեղն ապաւէն:  
Դիդեմք լուսին թէ որ ինչ  
Դայ թշուառին ի վերայ.  
Վկայ լինել յապագայս  
Ա՞ր անիրաւն առնէ զայս:  
Դարուց ի դարս չէ տեսուեր  
Ոչ պատմութեան կայ ի գիր,

Թէ Բայտղիտ այս բաժակ,  
Բաժակ մահու էր որ արբ:

Աչա խուժան մի ամբոխ,  
Գրոհ տուին միախուռն.  
Սուին սուսերն ի ձեռին  
Յափշտակեն կեանք հային:

Կեանք որ չորս օր ի յողբ կոծ

Տեսաւ զգաց շատ ցաւոց.

Աչա վերջին այս գիշեր.

Խսպառ խսպառ զրաւեր,

Ոչ թէ արծաթ եւ ոսկի,

Է գոցա չար նպատակ,

Այլ ծարաւիք հայ արեան

Սուրերաց ճարակ կուտան:

Լուսին այս ինչ տեսարան,

Ոչ խիստ ցաւոց է վայրկեան.

Գոռուն գոյիւն բաց թողումք

Թող չտեսնէ մեր աչկունք:

Մինը չտեսնէ միւսը կը տեսնէ,

Վշտեր վշտաց յաջորդ են,

Զրոց առուակի են կարմրեր,

Զի աստ մարդ են յոշոտեր:

Այս Շովիկ եւ Մարիամ

Այն թշուառիկ հարս կեսուր.

Մեծ առուակին զինեցին

Ի բաց թողին դնացին.

Դիդէ լուսին այն ինչ ձայն,

Խոր ի խորոց կականէ.

Մի պատկառուս օրիորդ,  
Հա վիրաւոր կայ ի տան:  
Դնանք ի տանց խոռոջներ,  
Կան վիրաւոր շատ դիեր.  
Կտտամահ սպանուած,  
Դեռ կը հեծեն թշուառներ:  
Ընկեր ընկերոջ վերայ,  
Կան թալկացած սւշաթափ.  
Թօշնած, ցամքած ի կենաց  
Նատ կարօտներ են թողած:  
Ապա մեր սուրբ տաճարներ,  
Սուրբ անօթներ մեր անգին.  
Խորան, սեղան դաբերայք  
Պղծագործեց թշնամին:  
Ապա այն ի՞նչ . . . սպանգարան  
Որ շատ հայոց է աւազան.  
Երկուասանք մի կարգի,  
Արէ սնցուց թշնամին:  
Լոյս տուր լուսին դիգեմք այս  
Ոյք են այս հայ նահատակք.  
Ոչ պարթեւազ Ռշտունին<sup>1)</sup>,  
Եւ հարազատ իւր որդին  
Աւաղ քստմնին իմ ոսկերք,  
Գնամք գնամք ո՞վ ընկեր.

<sup>1)</sup> Ռշտունցի Խաչատուր իւր որդով և տաս ու-  
րիշ հայերով մէկ տեղ ջէլօները մի ախոռա-  
տնում կապած սիւների և այնպէս չարաչար  
սպանել էին:

Երկինք վկայ անբարբ առ  
Յաւիտենից կացցէ դար:  
Վրէժինդիր այս արեանց  
Նա է արդար դատաւոր.  
Նա ցաւակից մեր ցաւոց,  
Թող բողոքէ ահեղ օրն:  
Հրեշտակդ հայոց բաղտ հայոց,  
Դուք որ լուիկ ունկնդիր.  
Առէք այս կոծ աղաղակ  
Տարէք ոլորտս տիեզերաց:  
Ասէք թէ անմեղ Բայազիտ,  
Անիրաւի այս զրկանք  
Իւր դարաւոր ոսոխէն  
Կրեց եղեւ նահատակ:

Ի 25 Յունիսի 1877 Հին Բայազիտ

### ՅԻՇԱՏԱԿԻ

Մամիկոնեանց քաջ նահատակների  
ԳԱՐԵԳԻՆ  
Նախաշաւիդ առաքինեաց  
Սուրբ նախարարն պատանի.  
Յառաջեալ յամեննեցունց  
Պատասխանէր ցասուցելոյն:  
Յառաջադէմն Գարեգին  
Սաւառնեալ արագապէս.

Եհաս յերկինս առ տարփալին  
Ետ զաւեսիս հօրն հաւատոյ:

Վ.ԱՐԴԱՆ  
Վաղարշապատ Հայաստան

Արփացեալն ի քաջ արանց  
Վ.ԵՀ Կորովին Մամիկոնեանց  
Գունդո ազաւնեաց խաչիւ կարգէր  
Դէմ ճակատու վատ սասանեանց:

Վարդանն անձնանուէր  
Վ.արդ անուն ժառանգելով  
Վ.արդագոյն արեամբ իւրով  
Պարծանք եղեւ եկեղեցւոյ:

ԽՈՐԵՆ ԽՈՐԽՈՌՈՒԽԵՆԻ.

Խորախորհուրդ քաջ շառաւիղն,  
Խորհէր ի միտս իւր սրբասէր.

Վ.կայ լինել Տեառն Յիսուսի  
Եւ ընդունել զինանս անվերջ:  
Խորէնն Խորխոռունի  
Քաջութեամբ նահատակեալ  
Ցաղթելով նախաչարին  
Վ.կայ եղեւ խաչեցելոյն:

ԱՐՏՈՒՐ.

Զարմանազգանչ յաղթօղ վկայն  
Քաջ նորատի երիտասարդ  
Առեալ նիզակ խաչադրօշ  
Զինու վառեալ սիրով հոգոյն:

Արտակն Պալունեան  
Անկեալ ի դաշտն Աւարայրի.  
Ս. պսակին վառեալ յուսով,  
Զինայեաց քաջ հասակին:

ՏԱՅԱՑ

Առաքինի սուրբ նահատակն,  
Սիրով մղեալ ի պատերազմ.  
Վասն ուխտին եկեղեցւոյ,  
Ի մարտ դիմէր ընդդէմ չարին:  
Տաճատ զարմանալի  
Տաճար եղեւ երրորդութեան,  
Եւ ընկալաւ զիրափիոն.  
Փառաց պսակ իւր յաղթութեան:

ՆԵՐՍԵՆ

Քաջատոհմիկ չքնաղ հսկայն  
Եթեւ հնոց սիրով կիզեալ  
Գետնատարած փռեալ մնացր  
Ի սիրոյն սուրբ խորանաց:  
Ներսէց քաջքերունի  
Ա.յգի եղեւ տեառն զօրութեանց  
Զարթարեցաւ անմահ ծաղկամբ  
Լստ հաւատոյն պսակեցաւ:

ԱՐՈՒԵՆ

Քաջ շառաւիղն Թորգոմայ  
Պանձալի վկայն արդար.

Յանկացեալ թագին փառաց  
Մրցանակին իւր յաղթութեան:  
Յանկալին արին Արսէն  
Որ սիրովն հայրենեաց,  
Զոհ եղեւ սիրով սրբեան  
Խորան եղեւ երրորդութեան,

ՀՄԱՑԵԱԿ,

Արիապանծ քաջն գիմակսեան  
Որ իմաստուն շնորհիւ լցեալ.  
Զրահաւորեալ զինու հոգոյն,  
Դիմէր ի մահ յօժարութեամբ:  
Հմայեակ ազնիւ ըողբոջ.  
Զքաջ անուն յերկրի թողեալ  
Լինէր ընծայ հանդիսադրին  
Կատարելավ ի փառս ուխտին:

ՎԱՀԱՆ

Պանձալի սուրբ նահատակն  
Վահանաւ հոգոյն փառեալ  
Ընդդէմ սեւագնդին,  
Յամօթ առնէր զիւր ախոյեանն:  
Վահանն մանկագոյն  
Որ ի տոհմէն էր Գնունեանց  
Սիրով ընկալ լինել վկայ,  
Խաչաչարչար սուրբ փեսային:

ՆԱՀԱՆ

Այս ախոյեանք ընդդէմ չարին  
Սիրով մղեալ ի պատերազմ

Վասն ուխտին եկեղեցւոյ,  
Ետուն զանձինս սիրով ի մահ:  
Քաջ շտուտիղքն Վարդանեանք  
Որք միանգամ չոգան ի մարտ  
Վարդագլուխ զօրավարաւն  
Պսակեցան հանդիսադրէն:

1865 Ի Վան

ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Ողջոյն տուէք իմ հայրենեաց  
Կիսակործան տաճարներուն  
Ողջոյն տուէք աւերակաց  
Արարատեան գաւառներուն:  
Ողջոյն տուէք պանդուխտ հայուն  
Թշուառ հայուն յուառ հայուն  
Ոչ ձեռք տուէք սչ սիրտ տուէք  
Ուսում տուէք ամեն հայուն:  
Ողջոյն տուէք Աւարայրի  
Արիւնաներկ սուրբ վայրերուն  
Ողջոյն տուէք տիսուր լուսնի  
Որ լացն է սեւ շիրմներուն:  
Ողջոյն տուէք ի խոր իջած  
Արքայական պալատներուն  
Ողջոյն տուէք գետնատարած.  
Արբոց ամբիծ մասունքներուն:  
Ողջոյն առւէք ոլոր մոլոր  
Պղտոր բոլոր գետակներաւն

Ողջոյն տուէք արիւնաներկ  
Սղիւեղի աղբիւրներուն:  
Ողջոյն ծաղկանց դուք խումբ ի խումբ  
Որք չեն թոռմած մէջ հովտերուն.  
Ուր հայ սոխակ թուփէ ի թուփ  
Կեանք կրխնդրէ իւր վարդերուն:  
Ողջոյն տուէք իմ դրախտի  
Տերեւաթափ պարտէզներուն.  
Ուր ծածկի սէր արեւ պահի  
Փառք մեր հայոց Աստուածներուն:

1866 Հիւ—Բայազիտ

ԳԱՎԹԱԿԱՆԻ ԵՐԳ.

Երբ տանէ տուն լինեմ ընկած,  
Մարաւ նօթի եւ անտերունջ.  
Մի մերժեր ինձ եւ այլայլած  
Մի հեռացիր.  
Ինձ օգնէ ով դու հայ,  
Ես հայ եմ անբաղդ.  
Տառապեալ քո եղբայր:  
Երբեմն ես էլ ունէի տուն  
Մեր գեղի մէջ նաեւ անուն  
Մի անարդեր եւ սրտնեղտծ  
Մի հեռացիր. եւ այլն  
Երբ աւերիչ կռիւ բայցուեց  
Զէլալէիտդին մեր տուն քանդեց,  
Մի զարհուրիր եւ բարկացած  
Մի հեռացիր, այլ խղճայ: եւ այլն

Մեր տուն ու տեղ գերի կարեց առօշ  
Մեզ շատերիցս էլ կոտորեց.  
Մի ատեր մեզ եւ զայրացած  
Մի հեռացիր. եւ այլն  
Կանաչ արտերը փճացրեց  
Խոկ եղածները այրեց մրկեց,  
Մի անպատուեր եւ դառնացած.  
Մի հեռացիր.  
Կարեկցիր. եւ այլն  
Այժմ ընկած օատր երկիր  
Հաց եմ մուրում դու կարեկցիր.  
Մի մերժեր ինձ եւ վշտացած  
Մի հեռացիր, այլ օգնէ: եւ այլն  
Անօթի են Մրտօն նիկօն  
Կիրօն, Կարօն, Ներօն Սրգէն.  
Իմ ճժուկներ են այդ ամէն  
Մի զալրացիր, չունին մայր,  
Սպանիր կամ գթա ով դու հայ  
Ես հայ եմ անբախտ  
Տառապեալ քո եղբայր:

1877 Ի Պուս Թուրքական պատերազմին

Ցաւակից Ոմ:

ԱՌ Սէրն ՄԱՅՐԵՆԻ.

Ի քեզ մայրիկ սիրտ իմ հրճուի,  
Ի քեզ հանգչի ամենայն

Ոչինչ յօտարս ինձ ցանկալի  
Քան զայդ անուն սրբազան.  
Բա, չին աւուրց խանթ ինչ բաղկաց  
Ուր իբր մանուկ սիրեցայ.  
Է՞ր, ասա ինձ յինէն ի բաց  
Զրկայ ի վայրս հայրենեաց.  
Ահա մնամ ողջոյն քեզ շատ.  
Կացից գեռ աստ յարակայ  
Կացից որքան մույրդ խանթակաթ  
Լուռ ողջունէ Հայրենեաց.  
Ոստանիկ ի Փարիզ.

~~~~~  
ՔՐԴԱՀԱՅԻ ԿԵՆԱՔ ԵՒ ԻՒՐ ԵՐԳ.

Իմ կեանքում ոչ մի օր  
Չկայ այնքան ցանկալի,  
Քանի մեր կոյս աղջկերք  
Դաժան քրդին է գերի  
Մեր կեանքում ոչ մի օր  
Մեզ չիք խնդում եւ հրճուանք,  
Երբ կը տեսնեմք զրկօղ ձեռք  
Հային կտայ տառաղանք:  
Մեր կեանքում չեմք ուրախ  
Եւ ոչ վայելք կը սիրեմք  
Երբ ամէնքո սեւ ոգով  
Սգողարկուած կը տեսնեմք:  
Մեր կեանքում չիք հանդիստ  
Երբ մեր վաստակք այլք կուտեն,

Ճակտից հոռած քրտանց, արդիւնք  
Քրդի ամբարք կը լեցնեն:  
Հայի համար մեզ համար,  
Միայն այն օր է ուրախ,  
Երբ կը գագրին ցօղած արց ունք  
Արտէն կելնէ քրդի ախն,

1883 Վան

## ԻՂՋ ՍՐՏԻՄ

Առ խանձարուրն իմ Վասպուրական  
աշխարհ և որ ինմա ծաղկաւէտ լեառն  
Վարագայ:

Որ յամպածրարն Արարատայ լերին պահիս ո՛Արծուիկ,  
Առ քեզ կարգայ նժդեհս ակնարկ առւր պանդխախ.  
Քեզ սուրհանդակ օդսպարիկ յշեմ իմ յաշխարհն  
Զերթ հրեշտակ առ և տար ողջոյնս կարօտանաց:  
Արագահաս իբրու զհով վիրասլացիր ով Արծիւ.  
Թոփիր ապա թառիր ի բարձրադիտակն Վարագայ.  
Եւ անտի ձայն տուր իմ նազելի մտերմեաց,  
Ողջունել զիմ սիրելիսն ողջունիւ կարօտանաց:  
Ապա առ զիմ սէրն խանդողագին ջերմ սիրով  
Տար և տուր մենասանին զարմանասքանչն Վարագայ,  
Ընդ ներքեւ նորին սիրուն և աշխարհին հայրենեաց  
Մտերմեացն իմ սիրելի որոց սիրով վառեալ եմ աստ.  
Սրաիւ կարօտալից երգեմ զլեառն ծաղկափթիթ  
Գալիլիէի և Աստղկան ոյց հաղուագիւտ են տեսարանք,

Եւ ընդ նոցին հանգունատիպ իմ հայրենի ճոխ բու-  
րաստանք.

Զայդեստանս ասեմ զուարձ վայրիկք դրախտանմանք,  
Ովո՞ առեալ և զիս տարցէ ի ծաղկատեղ այն վայրին,  
Գէթ վայրկեան մի ժամադիր լնուցում իմ իղձ կա-  
րօտանաց

Ուր համասփիւռ ծաւալիչոտն պերձ ծաղկանց  
Որ բնութեան են պարգևք գեղազարդետլ շուրջ Ա-  
րագաց:

Քանի՝ քաղցր է ինձ յիշել զմանկական մեր արարք,  
Քանի՝ քաղցր զպարագայսն յուշ ածել որ անցին ընդ  
մեօք.

Ընդ համատիսս որ ջերմ սիրով կարօտ եմ նոցին  
տեսուն,

Որ ընդ նոսին ազատազնեայ ճոխ ճեմէաք վայրիկ սիրուն,  
Լերինք, ուր համբակօբս առնէի պար աստի անդ  
մռաչութեալ թռչութեալ լուսելով  
Լերինք, ուր բուրումն զուարթ ծաղկանց լնուն զքիմս  
զբօսամիլիին.

Լերինք, որ գեղեցիկ շնչեաց զկենաց մեր աճման օդ,  
Ոչ այժմցս ի բացուստ շնչէ և վասէ զիս շնչել երգօք:  
Վայրս իւղաթարմ, ուր միտք մեր երեխայրի աճեցան,  
Վայրս, ուր իրք գառ անմեղ բառաչէաք անուշ ձայնիւ,  
Ովո՞ առեալ որ զիս տարցէ ի վեհավայրս և աշճարաց  
Եօթնեակ և խորանաց երկրպագել և տալ համբոյր,  
Եւ ի սօսասարասն ի մէնջ սրահին ազօթելով հանել  
նուագ,

Ուր երբեմն զերթ աղաւնի մրմջէի ընդ համատիսս:  
Տենչիւք սրտի որ փափագիմ սուրբ տեսութեան

Որ աշա սէր խանթակաթ զիս բորբոքէ նուագել զփառսն,  
Մինչ մայիսին գայ ժամանակ, բնութիւն պատռէ  
զգողն,

Մինչ փափիկանայ երկրագունդ, բանին հողոյն դրունք,

Յետո ընդ կրունկ դառնայ ձմեռն, թանձրամածք հա-

լին ի բաց.

Գարնանայնոյ զեփիւռն շնչէ և հարաւ տայ իւր հով,  
Զինչ գյոն զգոյն պատի զիւրկ այս լեառն ծաղկաւէտ,  
Ծլին ծաղկին, փթթին կանաչագեղք յեղերս աղբե-

րակաց:

Զի՞ հեշտալի ձայնք սահանաց, որ խոխոջուն գնան  
առուեկք

Դարիւ դարիւ ծածանին տերեկք խիտ խիտ ծաղկանց.

Պաղորակ ի ձիւնէն ծործորան ջուրք:

Ազատազնեաց լնուն զպապակ զովանան տապ նոցա  
սրտից:

Շիկորակ և կարմրաթպյր կարմիր կակաչն հրապուրիչ

Որ երին երփ բացուին թերթեր ծիրանագոյն զգեստա-  
ւորեալ,

Եւ կապտագեղն որ թագուհի է համայն ծաղկանց,

Զգեներուեկն ասեմ սիրուն ի մարգագետինս իւր խան  
ձարուր.

Խիտ օրէն և բարձրագէմ ծըլի ծաղկի ի ճախճախուտու

Ուր արմատով իւր պարպատէ խողոջուն ջուրք զլզը-  
զալով:

Ա՞իս, Ապարանջան որ սրբահոս են քոյդ վտակք,  
Համեղակ կաթնանման ջրոյդ պապակի պապեալ ըոր-  
թունս,

Դու նախնի ազատազնեաց աղբիւր ես վեհազնէից

Ոյրէ ի վրայ բազմին խոնջեալք երբ զնան ի Գալիլիա,

Զովանան ի քրտանց հոսեցելոյ հանգչին զբոլորիւքտ,

Զշշս ըմբելեաց եղեալ ի ջուրս նախերգանք առնեն  
երգոց:

Այս, գու դազր հրաշազան որ հազուագիւտ ես յա-

րարածու, Եղեմայնոյ բերեալ տիպար Նախաստեղծիցն Ճեմարան,

Թէւ անդ անմահ աղբերք Փեսով, Գեհով, Եփրատ

Տիգրիս,

Այլ ի քեզ յորդ վտակաց և բազմաթիւ են քոյդ  
ակունք։  
Լեառն, ոչ միայն մարմաւորօք պանձայ ի մէնջ հա-  
մայն լերինս։  
Այլ փառօքն հօգեոր որ յերկնից փայլեաց ի քեզ  
Լցս, որ պարպատեաց ընդարձակ համայն զվայրս։  
Ի գագաթանդ գանձ աշխարհի քառաթեին ընկալաւ մաս  
Ոյր առթիւ ոիւնք հրեղէնք զբոլորեքումք լուսափայլեաց։  
Ի լուսոյն Աստուածեղէն զեկուցեալ ողջ Վասպուրա-  
կան։  
Ի տենչալոյդ տեսեալ զհրաշ՝ ի տես փութաց և Վարդ  
պատրիկ։  
Իշձ ի տոչոր եօթնեակ խորանք հիմնեցին զքոյդ բոլոր,  
Որ պանձաս ի մէնջ համայն մենաստանացն Վանակերտի։  
Ասպնջական ի քեզ մնաց հրեշտակակենցաղ հայրն  
Թօթիկ։  
Ընդ Հովելիս աշակերտին մշաամուռն գոլ օրհներգու.  
Եւ ընդ նոցին օրինակաւ խստակրօն սուրբ ճգնաւորք,  
Կացին մնացին բազում ամօք կրօնասէր հարք վարդա-  
պետք։  
Այլ աւաղ զի ի նոցին ճգնավայրից միայն մնան սսւրբ  
աւերակք։  
Ապա ո՞ւր իցես ո պանդուխտ, որ ջերմ սիրով եր-  
կիցս անդամ,  
Ի գլուխ լերինն ելեր, ետուր համբոյր պատանտեղին։  
Սուրբ նախանձն վեհավայրից դրդէ զմանկտին Վաս-  
պուրական  
Երամ երամ դիմեն բազմի ի լեառն հրաշազարթ,  
Նախ ի ստորին մենաստանի հիւընկալին և տան համ։  
ԲՈՅՔ  
Ընդ այգոյն դիմեն բազմի ի բուրաստանս վանքաբոլոր,  
Ներքեւ ծառոց զբանանման ապա կազմեն խօրտիկ սեղան։  
Քաղցր զեփիւռն Վարագայ շնչեն և պարեն պար  
բոլորեալ,

Ոմն աստի և ոմն անաի տոփեն տրոփեն ատրճանակք.  
Գոռուն գոչիւն տան արձագանք լերինք և քարանձաւք։  
Կան և համբակք որք մեղմանուշ երգեն զտաղս սըր-  
տաճմիկ  
Ընդ կրկնչիւն վտակացն խողոջան և նոցին դայլակք։  
Ոչ իցիւ թէ Արծուիկ և զիս ընդ քեզ առեալ գնայիր,  
Ի նոցին յայնմ հրճուանաց լինել և ինձ ուրախակից։  
Երանի էր ինձ յայնժամ այն բախդին արժանացեալ  
Տեսարանացն հայրենի ելնէի զրօս ընկերակցօքս։  
Երախան երախան աղբերակացն ի գլուխ բազմեալ  
Երգէի ընդ համատիսս և ճեմ առեալ զուարթանայի։  
Եւ ապա վազվազելով յառապարս և յաւազուտս,  
Կթէի զիսաւարծիլս զրվացուցիչ պապակ շրթանցս։  
Եւ գյոնզգյոն անտի ծաղկունց փունձ հիւսէի շքեղ շքեղ  
Ի դարձիս իբրու ընծայ տայի պարգև իմ սիրելեացս։  
Ե՞րբ իցէ սա ո՞վ երկինք, և ե՞րբ արդեօք լնուցուս  
իմ իղձ,  
Բազմիլ յայնմ սեղանի ուր շուրջ պատի գեղաբոլոր։  
Կարմրերանդ շարք բաժակաց մատուակեալ առաջի։  
Երգել միաբերան, ով երջանիկ ուրախութեանս . . .  
Ակնդէդ կամ սպասու որ իղձ սրտիս աւարտի.  
Գնալ տեսնել իմ խանձարուրն աշխարհ որ ինձ ետ  
արե.  
Փարել սիրով հայրենեաց շնչել իւր հով մեղմանուշ  
Որ յայնժամ հրաշք իմնէ ինձ և արժանիք կարօտանացս։  
Ե՞րբ . . .  
Երկինք գիտէ,

2876 ի Հին—Բայազիտ

### ՅԻՇԱՏԱԿԻ

Հօրն իմոյ բազմերախտի Գրիգորի Շէրենց որ հանդեսու 18<sup>5</sup>/<sub>14</sub> 79 ի հասակի  
65 ամաց

Ախ իմ հայր . . .  
Մահուն անմաշ սուր գերանդին որև շողաց քեզ վերայ,  
Աստեաց արար վարագի ի սուգ պատեց մեզ համակ,  
Նոր ցաւոց տիուր երգանք նոր լալեաց եկ վայրկեան,  
Եշկունք մեր հարան արտօսը և սիրտք վարակեցան,  
Ի քո ի տարածամ մահուգ տիսրեցան ամենեքեան :

Աշխ իմ հայր . . .  
Այն ի՞նչ սև օր և ի՞նչ սև ժամ ի՞նչ սև բօթ,  
Կայծակնանման ինձ հասնելով վշտակելոյ տեղի բաց,  
Վեր ի վեր վրդովելով խաղաղն օրերիս,  
Ախ մահուգ եղերգանաց շրջապատեց ինձ լալեաց ձայն,  
Զրկեց յուրախութեանց որոյ մէջ կայի խաղաղ :

Ախ իմ հայր . . .  
Ի՞նչպէս յիշեմք քո աշխատանքդ ճգունքդ հայրախնամն  
Հայթայթէիր որդոցդ համար պտրել հանգիստ կեանք.  
Տալ ուսման, բարյատպէս մարդ կատարեալ պատրաստել  
Ապագայ ժամանակաց անդամ պիտանի կացուցանել,  
Երդ զրկիմք իսկապէս ի խնամոցդ բազմառատ :

Ախ իմ հայր . . .  
Այսպէս դառն արտասուաց բացեր մեզ լիճ,  
Անշատեցար ի սիրելեացդ գերեզմանին մտեր կիրճ,  
Հսկայաշուք քո հասակդ պարթեաղն քո պարզ դէմք,  
Պարուրեր սև հողով կափուցեր փայլուն աշերդ  
Ի հեկեանս թողեր և թոռունք փոքր ոգիք :

Ախ իմ հայր . . .  
Ուր գտից զքեզ իմ յարգելի ուր նստեալ եղերեցից  
Այս մեծ կորուսու որ հանդիպաւ մեզ որդեկացս.  
Սրտիւ կարօտալից մնացի զուրկ ի քաղցիկ ծոցոյդ  
Եւ տարագիր ի հայրենեաց ողբամ զքոյդ մահ:  
Որ հանգեար գնացիր երկնից սիրեր զկայան.  
Անդ անուանակցիդ Գրիգորի հանգչել ի գիրկ.  
Ընդ ծերունեացն ալեղարդից պարիլ յերկինս,  
Մինչ ի հնչել Գարբիելեան փողերի և ի գալ Ս. փեսային:

Ախ իմ հայր . . .  
Գամ ես, դառնամ գէպ հայրենիք բայց ի զուր  
Զի չերեկիք գուք առ ընկալել զիս ի գիրկ.  
Ուր գտից զքեզ և ես յայնժամ յո՞ր տեղի,  
Խոր լուռթեան գողով ծածկեալ ի խոր գերեզմանի  
Կանաչով ծածկած գերեզմանդ լինի և ննջարանդ:  
Թող գիշերին սև մութ պատէ զքոյդ շերմաւ,  
Թող ցողն առաւօտու թացցէ այդ գամբարան,  
Քո հրեշտակդ արթուն պահապան հսկէ շիրիմդ  
Անվկանդ պահել կնքեալ տապանդ ցյաւիտեան :

Ախ իմ հայր . . .  
Ապա ընկալ հարազատիդ այս տիսուր եղերդ,  
Ընկալ քո միակ հրդեակին որտի այս թառաջ,  
Մաղթել մաղթէ Փրկչէն Յիսուսէ ի սակս ղաւակացդ,  
Անսայթաք մնալ աստի կենցաղնյու և անվտանգ,  
Մինչ գալ գոնիւր գերեզմանդ և կարօտիւ  
Խրովսան արտասուօք թրչել այն սև հող.  
Կանգնել մահաբձան ի տրիտուր անբաւ երախտեացդ  
Հօրդ բազմերախտի. որ շատ յօգնեցար.  
Անմոռաց պահել զքոյդ արարք, մաղթել Փրկչէն  
Անդրանկացն յառագաստի վարձահատոյց քեզ լինել:

Ի 25 Սեպտ. 1879 Նոր—Բայազիս,

1881

ՈՂՋՈՅՆ

ՄԵՐ պարտիզի սոխակին.

Ողջոյն քեզ սոխակիդ մեր հայրենետց  
Ողջոյն սիրահարիդ վարդերին,  
Ողջոյն քաղցրանուագ թռչունիդ  
Որ հիւր ես մէջ մեր պարտիզին:  
Որ կը թռչես թռուփէ ի թռուփ,  
Կեանք կը մաղթեռ հայ փունջերի.  
Քո սիրտհարն հայրենիքն է  
Քեզ տեղ ունին վերեւ գլխի:  
Այդ կտուցիդ բռնած փունջեր,  
Ո՞ր ձեռքերովն են հաւաքուած.  
Եւ ի՞նչ բուրմունք անուշահոտ,  
Բուրէ ի քիմն հայ զաւակաց:  
Փունջերիդ տեսքն զմայլեցսւորիչ  
Նարդօս գրքում հոտ նարգիզի.  
Բուրէ ի հիւսիսոյ գէպ ի հարաւ  
ի քիմն մեր ծնած տեղի:  
Թռի՛ր թառիր ի յԱրարատ  
Բունդ շինէ Մասսի գագամ.  
Անտի գոչէ զհայ որեարս  
Անդի գոչէ զհայ եզրայրս:  
Ելի կրկին գարձիր մեր կողմ,  
Նոր երգեր բեր մեզ համար.  
Մեր սրտի միսիթարանք  
Դու ես անդադար:

1881 Նոր Բայազիտ

1877

ՈՒՍՏԱ ԹՌԱՋԱԿԱՆ պատերազմ և  
Պողանց գիւղ

Ն Ս Ի Է Ր

ԻՒՐ ՈՒՍՈՒՑԻՉ ԳԷՈՐԳ ՇԷՐԵՆՑԻ

Հազար ութ հարիւր եօթանասուն եօթին,  
Պատեց մառախուղ զմեր երկրին.

Անցան երջանիկ եւ ազատ օրեր,  
Նոցա տեղ տիրեց ճնշող սեւ գողեր:

Մինչ արծաթափայլ լուսինը գիշերուայ  
Դեռ նոր էր ծնուած իբր երեք օրուայ.

Սոյն երեկոյին անձրեւ կը դեղար.  
Երկնային կամարը վերէն կը գոռար:

Գիսաւոր աստղերը մոլորակներով  
Փայլուն լուսինը մանուկ հասակով,  
Ինչպէս թոյլ զինուոր ընդդէմ քաջերուն  
Թագնուերէին ետեւ ամպերուն:

Կան քաղքից հիւսիս երեք ժամ հեռի  
Կեցած կայ մի գիւղ ի վերայ ըլլի.

Սոյն գիւղ անուամբ Պողանց կը կոչուէր.  
Կարծեմ իւր անունը աստէն առած էր:

